ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՑ ԳՐՔԵՐԻ ԲՅՈՒՐԵՂԱՑՈՒՄ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

ՀԱՆԳՈՒՅԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Առաջին և Երկրորդ Թագավորաց գրքերում կարելի է տեսնել,
որ Եռամեկ Աստված Իր մարմնավորմամբ և փրկագնմամբ
լիարժեքորեն մասնակցում էր Սամուելին և Դավթին առաջացնելու գործին,
որպեսզի բերվեր Աստծու թագավորությունը.
խիստ կարևոր է տեսնել, որ Եռամեկ Աստված այսօր մասնակցում է
մեզ վերաբերող բաներին՝ գործելով մեր մեջ, որպեսզի կատարի Իր կամքը,
իրագործի Իր մտահղացումը և բավարարի Իր սրտի ցանկությունը:**

**Աստծու հավիտենական տնտեսության գագաթնակետին՝
Քրիստոսի Մարմնի իրականությանը, հասնելու
այլ ճանապարհ չկա՝ բացի աղոթելուց.
Քրիստոսի հարսը լինելու նպատակով մեր՝ հաղթողներ դառնալը՝
որպես Քրիստոսի Մարմնի իրականություն, կավարտի այս դարաշրջանը՝
եկեղեցու դարաշրջանը, և կվերադարձնի Քրիստոսին՝
որպես փառքի Թագավորի, ով Իր հաղթողների հետ թագավորության
դարաշրջանում կնվաճի այս երկիրը, կտիրի և կիշխի այս երկրին:**

**Քրիստոսը, ով արդեն Աստծու Որդին էր,
Իր մարմնացման, խաչելության և հարության միջոցով նորովի դարձավ
Աստծու Որդին, այն է՝ անդրանիկ Որդին,
Աստծու սահմանված Որդին՝ մարդկայնությամբ հանդերձ.
Հռմ 1:3-4-ում Քրիստոսը՝ Աստծու Որդին, փորձանմուշն է,
մինչդեռ 8:29-ի բազում եղբայրներն այս փորձանմուշից
«զանգվածային վերարտադրությամբ» առաջացվածներն են և
կյանքում փրկվելով՝ կկերպարանակցվեն անդրանիկ Որդու պատկերին:**

**Աստծու տնտեսությունն այն է, որ Նա Իրեն ներդնում է մեր մեջ,
որպեսզի մենք փորձառաբար ապրենք
հոգևոր մարսողության և յուրացման նյութափոխանակական գործընթացը,
որն առաջացնում է փոխակերպում՝ որպես մեր բնական կյանքում
աստվածային կյանքով նյութափոխանակական աստիճանական և
խորքային փոփոխություն. սա Քրիստոսի Մարմնի կառուցման համար է,
որը կավարտունացնի Նոր Երուսաղեմը:**

© 2021 Living Stream Ministry

Առաջին հաղորդում

Առաջին և Երկրորդ Թագավորաց գրքերի կենտրոնական միտքը և այդ գրքերում բացահայտված Աստվածային Երրորդությունը

Գրվածքների ընթերցում. Ա Թգ 1:3, 7, 10-11, 19-24, 2:11, 35, 3:9-11, 21, 7:3-6, 8:4-22, 16:1-3, 13, Բ Թգ 23:1-3, 24:25

I. Առաջին և Երկրորդ Թագավորաց գրքերի կենտրոնական միտքն այն է, որ Աստծու տնտեսության իրագործման համար անհրաժեշտ է մարդու համագործակցությունը՝ մարմնացման սկզբունքը.

Ա. Մարմնացման սկզբունքն այն է, որ Աստված մտնում է մարդու մեջ և Իրեն միաձուլում մարդու հետ՝ մարդուն Իր հետ մեկ դարձնելու համար. ուստի Աստված մարդու մեջ է, և մարդը՝ Աստծու մեջ, և նրանք ունեն մեկ կյանք և մեկ ապրելակերպ՝ Հվի 15:4-5, Գղտ 2:20:

Բ. Մենք պետք է խորապես տպավորվենք այն փաստով, որ Աստծու տնտեսության իրագործման համար պահանջվում է մեր համագործակցությունը. Աստծու հետ համագործակցել նշանակում է Աստծու հետ կապված լինել՝ Ա Կրթ 6:17, Հվի 15:4-5, Բ Կրթ 6:1, Ա Կրթ 3:9, 16:10, 16:

Գ. Ա և Բ Թագավորաց գրքերում Աստծու հետ համագործակցությունը դրական առումով լուսաբանված է Սամուելի մոր՝ Աննայի, Սամուելի ու Դավթի պատմություններով, իսկ բացասական առումով՝ Հեղիի և Սավուղի պատմություններով:

Դ. Մարմնացման սկզբունքով Աստծու հետ համագործակցելը կապված է բարի երկրի անձնական վայելքի հետ, որը համաբովանդակ և համընդարձակ Քրիստոսի նախատիպն է՝ Երկ Օր 8:7-10.

1. Առաջին և Երկրորդ Թագավորաց գրքերը՝ որպես Հեսուի, Դատավորաց և Հռութի գրքերի շարունակություն, մանրամասներ են ներկայացնում Աստծու տված բարի երկիրը վայելելու վերաբերյալ:
2. Առաջին և Երկրորդ Թագավորաց գրքերի նախատիպերը մեզ ցույց են տալիս, որ նորկտակարանյան հավատացյալները կարող են և պետք է վայելեն Քրիստոսին՝ որպես Աստծու կողմից իրենց հատկացված բաժնի, Աստծու թագավորության հաստատման համար, այսինքն՝ եկեղեցու՝ Կող 1:12, Մտթ 16:18-19, Հռմ 14:17.
   ա. Առաջին և Երկրորդ Թագավորաց գրքերում բարի երկիրը, որը նրանք էին վայելում, ովքեր Աստծու հետ համագործակցում էին, դարձավ Աստծու թագավորությունը:
   բ. Աստծու հետ համագործակցելիս մենք պետք է այն աստիճան վայելենք Քրիստոսին, որ Քրիստոսի մեր վայելքը դառնա Աստծու թագավորությունը, որում մենք Քրիստոսի հետ թագավորում ենք կյանքում՝ Հռմ 5:17, 14:17:

II. Մենք պետք է տեսնենք Աստվածային Երրորդությանը, ինչպես այն բացահայտված է Առաջին և Երկրորդ Թագավորաց գրքերում.

Ա. Աստծու նպատակը՝ կապված Իր ընտրյալ ժողովրդի հետ, պարզապես թշնամիներին պարտության մատնելն ու բարի երկրին լիովին տիրելը չէր, այլ որ նրանք այդ երկրում թագավորություն հիմնեին.

1. Որպեսզի Աստված իրագործի արտահայտություն ունենալու Իր մտադրությունը, Նա պետք է թագավորություն, ոլորտ ունենա, որտեղ Ինքն արտահայտվում է՝ Ա Թգ 10:25, Մտթ 6:10, Ղկս 1:33:
2. Իսրայելի զավակները դուրս բերվեցին Եգիպտոսից և անցկացվեցին անապատի միջով, որտեղ Աստծու համար խորանը կառուցեցին. ապա նրանք մտան բարի երկիրը, և ամեն ցեղի հատկացվեց երկրի մի բաժին, որպեսզի Աստված երկրի վրա թագավորություն ունենա՝ Հս 13:1–22:34:
3. Առաջին և Երկրորդ Թագավորաց գրքերը թագավորությունը բերելու համար վճռորոշ դեր են խաղում՝ Ա Թգ 8:4-22, 10:25, 13:14, 15:28, 16:1-3, 13:

Բ. Դատավորաց գրքում տիրող թշվառ վիճակի պատճառով այնտեղ Սամուելի նման մեկի անհետաձգելի և հրատապ կարիքը կար՝ Ա Թգ 2:35, 3:21.

1. Սամուելն ուխտավոր էր, քահանա, մարգարե և դատավոր. այս քառակողմ կարգավիճակը Սամուելին որակավորեց լինելու մեկը, ով կարող էր բերել թագավորին և հաստատել թագավորությունը:
2. Այն, որ Սամուելը քահանա, մարգարե և դատավոր էր, Աստծու նպատակը չէր. Աստծու նպատակը թագավորի հետ թագավորություն հաստատելն էր՝ 8:7, 13:14:

Գ. Առաջին և Երկրորդ Թագավորաց գրքերը բացահայտում են, որ թագավորին բերելը և թագավորությունը հաստատելը կախված էին Աստվածային Երրորդության՝ Իր ժողովրդին վերաբերող բաներին մասնակցելուց.

1. Որպեսզի այնպիսի մեկը, ինչպիսին Սամուելն է, բարձրացվեր և իրագործեր իր հանձնարարությունը, Աստվածային Երրորդության կարիքը կար՝ Ա Թգ 1:10-11, 20, 10:1, 6, 16:1-3:
2. Այդ պատճառով Առաջին և Երկրորդ Թագավորաց գրքերում կա Աստվածային Երրորդության մանրամասն, նուրբ հայտնություն. Առաջին և Երկրորդ Թագավորաց գրքերում գրառված պատմության առանցքային պահն այն է, որ կար Աստվածային Երրորդության կարիքը՝ Բ Թգ 22:1-3, 23:1-3, 24:25:

Դ. Աստվածային Երրորդությունը և Տիրոջ գերիշխան ձեռքը բացահայտված են Ա Թգ 1-ին գլխում.

1. Դեգրադացված Իսրայելի քառսում Եղկանան և Աննան մնացին Աստծու՝ Իր հավիտենական նպատակի համար սահմանած կյանքի ճանապարհին՝ խխ. 1-5, 10-11, 20, 24:
2. Ամեն տարի Եղկանան իր ընտանիքի հետ գնում էր Աստծու տունը՝

խորանը, որ այդ ժամանակ Սելոովում էր՝ Եհովային երկրպագելու և ընծաներ մատուցելու համար՝ խխ. 3, 21-24.

ա. 3-7, 10-11, 20 և 24 խոսքերի զոհաբերությունները Քրիստոսի՝ որպես բոլոր ընծաների նախատիպն են. ցլերը, ալյուրը և գինին խորհրդապատկերում են այն Քրիստոսին, ում մենք փորձառաբար ապրում և բերում ենք Աստծու տունը՝ մատուցելու Նրան:

բ. Եհովան մեծ «Ես եմ»-ն է, և Եհովայի տունը Քրիստոսն է որպես Աստծու մարմնավորումը՝ Աստծու ժողովրդի մեջ Աստծու բնակատեղը լինելու համար՝ խխ. 10-11:

գ. Այս բաժինը հիմնականում ցույց է տալիս Աստծու տունը՝ որպես Եռամեկ Աստծու մարմնավորումը, և ընծաները՝ որպես միջոցը՝ Աստծու մարմնավորման մեջ մտնելու համար, այսինքն՝ փրկագնումը. հետևաբար այս խոսքերում տեսնում ենք Աստծու մարմնավորումը և Աստծու լիակատար փրկագնումը՝ հմմտ Հվի 1:14, 29, Ղկս 1:68, 2:38, Եփս 1:7:

3. Քանի որ Եհովան փակել էր Աննայի արգանդը, նա ստիպված էր հուսակտուր, նվիրաբերված և նվիրաբերվող աղոթքներ անել. Աստծուց գերիշխանորեն և գաղտնի մղում ստացած՝ նա աղոթում էր արու զավակի համար, որը բացարձակապես Տիրոջ համար կլիներ՝ Ա Թգ 1:5, 10-12, 15:

Ե. Առաջին և Երկրորդ Թագավորաց գրքերում կարելի է տեսնել, որ Եռամեկ Աստված Իր մարմնավորմամբ և փրկագնմամբ լիարժեքորեն մասնակցում էր Սամուելին ու Դավթին առաջացնելու գործին, որպեսզի բերվեր Աստծու թագավորությունը.

1. Աստվածային Երրորդությունը բացահայտվում է Դավթին թագավոր դարձնելու նպատակով օծելու ժամանակ՝ Ա Թգ 16:1-3, 13.

ա. Այս խոսքերում տեսնում ենք Եռամեկ Աստծուն՝ որպես Եհովային, և Եռամեկ Աստծու Հոգուն՝ որպես Եհովայի Հոգուն՝ խ. 13:

բ. Յուղն Աստծու Հոգու նախատիպն է, իսկ զոհաբերված երինջը Քրիստոսի՝ որպես ընծայի նախատիպն է. ուստի Աստվածային Երրորդությունը մասնակցում էր Դավթի օծմանը՝ նրան Իսրայելի վրա թագավոր դարձնելով՝ Սղմ 89:20:

2. Բ Թգ 22:1-3-ում Եհովային Դավթի հղած երգի խոսքերում Եհովան հիշատակվում է որպես նրա ժայռը, ամրությունը, Ազատարարը, վեմը և փրկության վահանն ու եղջյուրը. 47-րդ խոսքում Դավիթը հռչակում է. «Եհովան ապրում է, և օրհնյալ լինի իմ վեմը, և բարձրացված լինի Աստված՝ իմ փրկության վեմը»:

3. Բ Թգ 23:1-3-ում՝ Դավթի վերջին խոսքերում, Եհովայի Հոգին խոսեց նրա միջոցով, և Իսրայելի Վեմը խոսեց նրա հետ՝ խխ. 2-3.

ա. Այս խոսքերում Վեմը Քրիստոսն է՝ որպես Աստծու համար Իր ժողովրդին շնորհք տալու հիմք:

բ. Եհովայի Հոգին Եռամեկ Աստծու Հոգին է՝ Ա Թգ 10:6, 16:13:

գ. Այս խոսքերում «Աստված» եբրայերեն «Էլոհիմ»-ն է, ինչը մատնացույց է անում Եռամեկ Աստծուն:

4. Բ Թգ 24:25-ում ողջակեզները՝ Քրիստոսի նախատիպն են Աստծու բավարարության համար, իսկ խաղաղության ընծաները՝ Քրիստոսի նախատիպը՝ Աստծու և Նրա ժողովրդի միջև խաղաղության համար:

III. Մեր ներկա իրավիճակը և Աստծու կարիքն այսօր սկզբունքորեն նույնն են, ինչպես Սամուելի օրերի իրավիճակն ու կարիքն էին՝ Ա Թգ 8:4-22.

Ա. Հրատապ կարիք կա, որ ոմանք գործուն աղոթքներով աղոթեն Աստծու նպատակի համար, ինչպես որ Աննան արեց, և որ որակավորվածները լինեն ինչպես Սամուելը՝ ուխտավոր, քահանա, մարգարե և վերջին դատավորը, ում Աստված օգտագործեց՝ վերջ դնելու Աստծու ժողովրդի միջավայրում եղող խառնաշփոթ իրավիճակին և բերելու թագավորին և թագավորությունը՝ 2:35.

1. Այսօր Աստծու կարիքը բավարարելու նպատակով աղոթելու համար մենք Քրիստոսի՝ որպես Եռամեկ Աստծու մարմնավորման և բոլոր ընծաների իրականության կարիքն ունենք, ինչպես նաև Ժողովքի Վրանի իրականացման կարիքը, որը եկեղեցին է՝ որպես Աստծու բնակատեղ՝ Կող 2:9-10, Եփս 2:21-22, Եբր 8:1-2, 10:8-10:
2. Ինչ-որ իմաստով մեր Թագավոր Քրիստոսը դեռ այստեղ չէ, իսկ մենք դեռ խառնաշփոթ իրավիճակում ենք, ինչպես դատավորների դարաշրջանում՝ Դտվ 21:25:
3. Աստծու թագավորության իրականացումը թագավորության գալուստն է, որը կբերի Տեր Հիսուսը, բայց այսօր կարիք կա, որ ոմանք Սամուելի նման համագործակցեն Աստվածային Երրորդության հետ՝ բերելով այդ թագավորությունը՝ Մտթ 6:33, Ա Կրթ 6:17, 16:10, Բ Կրթ 6:1:
4. Մենք պետք է գիտակցենք, թե որքան է Աստվածային Երրորդությունն անհրաժեշտ գործուն աղոթքներ անելու և թագավորությունը բերելու համար՝ Մտթ 6:10, 13, Հյտ 1:4-7, 8:3-5:

Բ. Եռամեկ Աստված Իր մարմնավորմամբ, Իր փրկագնմամբ և Իր Հոգով մեզ Իր գալստյան համար և Իր թագավորության համար կազմությամբ օգտակար անձինք է դարձնում՝ Բ Կրթ 13:14:

Գ. Խիստ կարևոր է տեսնել, որ Եռամեկ Աստված այսօր մասնակցում է մեզ վերաբերող բաներին՝ գործելով մեր մեջ, որպեսզի կատարի Իր կամքը, իրագործի Իր մտահղացումը և բավարարի Իր սրտի ցանկությունը՝ Փլպ 2:13, Եբր 13:21, Եփս 1:5, 9, 11, 5:17, Կող 1:9, Հռմ 12:2, Հյտ 4:11.

1. Եթե մենք այս տեսությունը տեսնենք, այն կհեղաշրջի քրիստոնյա լինելու մասին մեր պատկերացումը՝ Գրծ 26:19, Հռմ 12:7-8, Բ Կրթ 5:14-15, Եփս 3:16-17:
2. Մեր բնական, կրոնական, մշակութային, բարոյական և բարոյագիտական պատկերացումները քրիստոնեական կյանքի մասին պետք է փոխարինել դրանց ամբողջությամբ մասնակցող Եռամեկ Աստծու տեսությամբ՝ Մտթ 28:19, Բ Կրթ 13:14, Եփս 4:4-6, Հյտ 1:4-7:

© 2021 Living Stream Ministry